ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 05 » 02 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000011

Ձեռնարկողը՝ ***«Էյ Թի Էմ Էս Սոլյուշնս» ՍՊԸ***
Ք. Երևան, Վ. Սարգսյան 26

Գործունեությունը՝ ***«ՀԷՑ» ՓԲԸ-ի «Մարց» 35/10կՎ ենթակայանից սնվող «Լորուտ» 10կՎ օդային գծի վերակառուցում» շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դռնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000211

<<05>> 02 2020թ.

«ՀԷՑ» ՓԲԸ-ի «Մարց» 35/10կՎ ենթակայանից սնվող «Լորուտ» 10կՎ օդային գծի վերակառուցում» աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Պատվիրատու՝	«Էյ Թի Էմ Էս Սոլյուշնս» ՍՊԸ
Նախագծող՝	«Էյ Թի Էմ Էս Սոլյուշնս» ՍՊԸ «Վոլիոս» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	- Շրջակա միջավայրի վրա ազդեցության (ՇՄԱԳ) հաշվետվություն, - նախագծային փաստաթուղթ
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզ

Նախագծով նախատեսվում է վերակառուցել Լոռու մարզի Թումանյան բազմաբնակավայր համայնքի տարածաշրջանում գտնվող «Մարց» 35/10կՎ ենթակայանից սնվող «Լորուտ» 10կՎ օդային գիծը:

Նկարագրական մաս. նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները:

Նախագծվող L1 տեղամաս - Լորուտ գյուղի չբնակեցված տարածքով անցնող «Լորուտ» 10կՎ օդային գծի №94 ÷ №116 հենարաններով հատվածի վերակառուցում՝ ապամոնտաժում և փոխարինում նոր ուղեգծով անցնող 10կՎ օդային գծով:

Նախագծվող L2 տեղամաս - «Լորուտ» 10կՎ օդային գծի №180 խարսխային հենարանից ճյուղավորվելով, Ահնիձոր գյուղի չբնակեցված տարածքով անցնող, նոր 10կՎ օդային գծի կառուցում՝ մինչև «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին պատկանող ԳԵ5622 (16/10կՎԱ) ԼՏԵ-ն սնող՝ 10կՎ օդային գծի վերջից 3-րդ խարսխային հենարանին միանալը:

Ապամոնտաժվող L3 տեղամաս - «Լորուտ» 10կՎ օդային գծի՝ Աթան գյուղից մինչև Ահնիձոր գյուղ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի ԼՏԵ-ն սնող 10կՎ օդային գծի ճյուղավորման հենարան հատվածի ապամոնտաժում:

Նախատեսվող գործունեության տարածքի հատակագիծը՝ կառուցվող և ապամոնտաժվող օդային գծերի ուղեգծերը, համաձայնեցված են Թումանյանի համայնքապետարանի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Դեբեդ» և «Թումանյան» մասնաճյուղերի գլխավոր ճարտարագետների և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ: Աշխատանքային նախագծի համաձայն Թումանյան բազմաբնակավայր համայնքում կառուցվելու է 5005.0մ և

ապամոնտաժվելու է 3880.0մ երկարությամբ օդային գիծ: Կառուցվող և ապամոնտաժվող էլեկտրամատակարարման օդային գծերը գտնվում են Թումանյան բազմաբնակավայր համայնքի վարչական սահմաններում՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Դսեղի անտառտնտեսության «Մոտկորի» և «Մարցի» անտառպետությունների տարածքներում: L1 և L2 տեղամասերում կառուցվող օդային գծերը անցկացվելու են վերգետնյա ճանապարհով՝ ճանապարհի երկայնքով: Տվյալ տարածքի հողերը համայնքային սեփականության հողեր են: Ինչ վերաբերվում է L1 և L3 տեղամասերում ապամոնտաժվող օդային գծերին, ապա այդ տարածքների հողերը պատկանում են համապատասխանաբար «Մարցի» և «Մոտկորի» անտառպետություններին, որոնք գտնվում են Դսեղի անտառտնտեսության կազմում: Նոր օդային գծերի կառուցման համար տեղադրվելու է ընդհանուր հաշվով 91 հատ հենարան՝ որից փայտե՝ 14 հատ, երկաթբետոնե՝ 77 հատ: Հենարանների տեղադրման, ինչպես նաև հաղորդալարերի հողանցման համար իրականացվելու են 409.0մ^3 ծավալով փորման աշխատանքներ, որից՝

- փայտե հենարանների տեղադրման համար - 46.8մ^3 ծավալով հողային աշխատանքներ, որից բուսահող՝ 1.0մ^3 ,
- երկաթբետոնե հենարանների տեղադրման համար - 311.2մ^3 ծավալով հողային աշխատանքներ, որից բուսահող՝ 6.5մ^3,
- հենարանների հողանցման համար – 51.0մ^3 ծավալով հողային աշխատանքներ, որից բուսահող՝ 23.0մ^3:

Բուսահողն օգտագործվելու է տեղում, յուրաքանչյուր տեղադրված հենարանի տարածքում՝ վերականգնելով հողի վերին շերտ: Մնացած հողային հանույթը՝ 378.5մ^3 ծավալով օգտագործվելու է հենարանների տեղադրման աշխատանքներից հետո տարածքների հետլցման և հարթեցման նպատակով: Ընդհանուր ապամոնտաժվելու է 68 հենարան, որից՝ 47 հատը L3 տեղամասի և 21 հատը՝ L1 տեղամասի համար: Հենարանների ապամոնտաժման արդյունքում ազատված հողատարածքի ընդհանուր մակերեսը կկազմի 6.8մ^2: Նախատեսվող գործունեության համար մոտեցման ճանապարհների կառուցման անհրաժեշտություն չկա, քանի որ նոր օդային գծերի կառուցման համար անհրաժեշտ հենարանները տեղադրվելու են ճանապարհի երկայնքով: Օդային գծերի կառուցման և ապամոնտաժման աշխատանքների ընթացքում հողի ժամանակավոր կամ հիմնական օտարման անհրաժեշտություն չկա:

Նոր կառուցվող 10կՎ օդային գծի երկարությունը կազմում է՝ L1 տեղամասի համար 1460.0մ, իսկ L2 տեղամասի համար՝ 3545.0մ: Ընտրվել է օդային գծերի հաղորդալարի 1x50մմ^2 կտրվածքով СИП 1-3 տեսակը՝ «Լորուտ» 10կՎ ՕԳ-ից մինչև մայրուղային նշանակության գործող գծի հատվածում: 10կՎ օդային գծի կառուցման համար նախատեսված են երկաթբետոնե և փայտե հենարաններ: Փայտե հենարանների ընտրությունը պայմանավորված է ուղեգծի այդ հատվածում մեքենա-մեխանիզմների մոտեցման անհնարինության հանգամանքով: Էլեկտրամատակարարման օդային գծերի կառուցման և ապամոնտաժման աշխատանքներն իրականացվելու են երկու փուլով՝ Փուլ I - նոր օդային գծերի կառուցման և հենարանների տեղադրման փուլ (այսուհետ՝ կառուցման փուլ) և Փուլ II - գործող օդային գծերի և հենարանների ապամոնտաժման փուլ (այսուհետ՝ ապամոնտաժման փուլ):

Աշխատանքային նախագծի համաձայն՝ կառուցվող 5005.0մ և ապամոնտաժվող 3880.0մ երկարությամբ էլեկտրամատակարարման օդային գծերի տարածքը գտնվում է Թումանյան բազմաբնակավայր համայնքի վարչական սահմաններում՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Դսեղի անտառտնտեսության տարածքում:

Նոր օդային գծի կառուցման համար օգտագործվելու են ինքնակիր մեկուսացված հաղորդալարեր (ԻՄՀ), որոնք մեկուսիչ թաղանթով և բարձր անվտանգությամբ օժտված հաղորդալարեր են: ԻՄՀ հաղորդալարերի օգտագործումը թույլ է տալիս խուսափել

ծառահատումից, ուստի աշխատանքի իրականացման ընթացքում օդային գծերի ուրվագծով ծառահատումներ իրականացնելու անհրաժեշտություն չի առաջանա: Ինչ վերաբերվում է գործող օդային գծի ապամոնտաժման աշխատանքներին, ապա աշխատանքները իրականացվելու են ձեռքով՝ առանց շինտեխնիկայի կիրառման: Ուստի գործող օդային գծի ապամոնտաժման աշխատանքների համար շինտեխնիկայի մոտեցման, ճանապարհների կառուցման, ինչպես նաև ծառահատման աշխատանքների իրականացման անհրաժեշտություն չի առաջանա:

Նախատեսվող գործունեության ցուցանիշներն են.

1) Էլեկտրամատակարարման գծի կառուցման աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 38 աշխատանքային օր, ընդ որում Փուլ I-ը իրականացվելու է 23 օրում (184 ժամ), իսկ Փուլ II-ը՝ 15 օրում (120 ժամ):

Նախատեսվող գործունեության տարածքի հարևանությամբ վարձվելու է սեփական տուն, որը հանդիսանալու է կառուցման աշխատանքների ժամանակահատվածում կազմակերպության գրասենյակը, ինչպես նաև ծառայելու է կառուցման աշխատանքներում ներգրավված անձանց սանիտարահիգիենիկ կարիքները (լոգարան, զուգարան և սննդի ընդունման սենյակ) հոգալու համար, իսկ արդիրապարակում կտեղադրվի նաև բիո-զուգարան:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են՝ շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները (վառելիքի այրման արդյունքում), հողային/փորման աշխատանքների և գրունտի տեղափոխման ընթացքում, ինչպես նաև շահագործվող տեխնիկայի շարժից առաջացող փոշին՝ հանդիսանալով չկազմակերպված արտանետումների հիմնական աղբյուրներ:

Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով մթնոլորտային վնասակար նյութերի արտանետումները չնչին են (էլեկտրամատակարարման գծերի կառուցման, ինչպես նաև ապամոնտաժման ժամանակահատվածում վնասակար նյութերի արտանետումների գումարային ծավալը կկազմի 0.5161տ) և էական ազդեցություն չի ունենա շրջակա միջավայրի վրա: Մթնոլորտային արտանետումները հիմնականում շարժական աղբյուրներից են, իսկ արտանետումների տեսակը մերձգետնյա է (արտանետման աղբյուրի բարձությունը չի գերազանցում 2.0մ-ը), այսինքն՝ այն չի կարող ցրվել համեմատաբար մեծ հեռավորությունների վրա: Հաշվի առնելով նաև հողային աշխատանքների տևողությունը (23 օր), ինչպես նաև ձեռնարկվող մեղմացման միջոցառումները՝ ակնհայտ է, որ կանխատեսվող արտանետումները չեն ազդի մոտակա բնակավայրերի մթնոլորտային օդի որակի վրա:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ-կենցաղային կարիքների ապահովման համար: Այսպիսով, նախատեսվող գործունեությունների իրականացման ժամանակ՝ Փուլ I-ում և Փուլ II-ում, ընդհանուր ջրօգտագործումը կկազմի 10.8մ³/կառուցման ժամանակահատված, իսկ ընդհանուր կեղտաջրերը կազմեն 1.97մ³/կառուցման ժամանակահատված:

Էլեկտրամատակարարման օդային գծերի կառուցման փուլում կառաջանան հիմնականում շատ չնչին քանակությամբ ալյումինե (ծածկագիր 3531010501995) և պղնձե (ծածկագիր 3531030501013) մալուխների/հաղորդալարերի մնացորդների թափոններ: Մեծածավալ թափոնագոյացում կլինի գործող օդային գծերի ապամոնտաժման աշխատանքների արդյունքում: Ապամոնտաժման փուլում առաջացող հիմնական թափոնատեսակները կլինեն՝ փայտանյութ (ծածկագիր 1712080001014)՝ մոտ 30.719տ քանակությամբ, ալյումինե (ծածկագիր 3531010501995) և պղնձե (ծածկագիր 3531030501013) մալուխների/հաղորդալարերի մնացորդներ՝ միասին մոտ 1.7տ

քանակությամբ և սև մետաղի ջարդոն (ծածկագիր 3513110001004)՝ մոտ 0.875տ քանակությամբ: Կառուցման և ապամոնտաժման փուլերում առաջացած սև մետաղի ջարդոնի, փայտանյութի, ինչպես նաև այլումինե և պղնձե մալուխների/հաղորդալարերի մնացորդների թափոնները կտեղափոխվեն «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի պահեստ: Կառուցման փուլում կիրառվող նյութերը մատակարարվելու են «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի պահեստից, անմիջապես օգտագործումից առաջ: Նախատեսվող գործունեության տարածքում բոլոր հեղուկ նյութերը պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերից խուսափելու համար: Փոշի առաջացնող նյութերը մինչև օգտագործումը, ինչպես նաև անբարենպաստ մթնոլորտային պայմանների դեպքում, ծածկվելու են բրեզենտով կամ ՊՎՔ թաղանթով:

Պատճառաբանական մաս: Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ շրջակա միջավայրի գնահատման փուլում /2 փուլ/ և փորձաքննության գործընթացներում /մեկ փուլ/:

Քննարկումների ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են Շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները, ներկայացվել են առաջարկություններ ու դիտողություններ:

ՇՄԱԳ հաշվետվությունը լրակազմելու և փորձաքննության գործընթացի լիաժեքությունն ապահովելու նպատակով փորձաքննական գործընթացը, ըստ Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի, 20 աշխատանքային օրով երկարաձգվել է, ինչի մասին 04.12.2019թ. N 5/32/2074 գրությամբ տեղեկացվել է ձեռնարկողին: Սակայն ձեռնարկողի կողմից չեն պահպանվել սույն օրենքով սահմանված պահանջները և կրկին՝ 21.01.2020թ. N 5/32/410 գրությամբ տեղեկացվել է ձեռնարկողին, որ ս.թ. հունվարի 27-ից սկսած, Օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն գործընթացը երկարաձգվում է ևս 10 աշխատանքային օրով՝ հանրային քննարկումներ իրականացնելու և փորձաքննության լիարժեքությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով: Նշվել է, որ մինչև 24.01.2020թ., դիտողություններով և առաջարկություններով լրակազմված ՇՄԱԳ հաշվետվության թղթային և էլեկտրոնային տարբերակները անհրաժեշտ է ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ Օրենքով սահմանված փորձաքննական գործընթացն ավարտելու համար: Ձեռնարկողին տեղեկացվել է, որ համաձայն Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի սահմանված ժամկետում պահանջված փաստաթղթերը և տեղեկատվությունը չներկայացնելը, թերություններով կամ ոչ լիարժեք ներկայացնելը հիմք են փորձաքննական բացասական եզրակացություն տալու համար

Սակայն ձեռնարկողը սահմանված ժամկետում պահանջները չի կատարել և չի ներկայացրել լրակազմ ՇՄԱԳ հաշվետվությունը, ինչը հնարավորություն չի տվել իրականացնելու հանրային քննարկումների 4-րդ փուլը՝ 2014թ. 19 նոյեմբերի N 1325-Ն որոշման 45-րդ կետի:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Վերը նշված հիմնավորմամբ «Էյ Թի Էմ Էս Սոլյուշնս» ՍՊԸ կողմից ներկայացված «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Մարց» 35/10կՎ ենթակայանից սնվող «Լորուտ» 10կՎ օդային գծի վերակառուցում» աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

Գլխ. մասնագետ Կ. Մովսիսյան